

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Օգոստոսի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգոստոսի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է բարձ 2-3 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են օգոստոսի 24-ին. Տավուշում գրանցվել է +35..+37^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +30...+32^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +38...+40^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +35...+37^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +29...+31^{0}C, Շիրակում՝ +32...+35^{0}C (Աշոցք՝ 29^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +29...+32^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +33...+35^{0}C, Գեղարքունիքում՝ +28...+31^{0}C, Լոռիում՝ +29...+33^{0}C, Արմավիրում՝ +36...+38^{0}C, Արարատում՝ +38...+40^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +29...+31^{0}C, նախալեռներում՝ +33...+37^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 22-ին. Շիրակում գրանցվել է +4...+9^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +7...+12^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18^{0}C, Տավուշում +35...+37^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +5...+7^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +15...+20^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +7...+12^{0}C, Գեղարքունիքում՝ +5...+7^{0}C (Սևան, Շորժա՝ +14^0 C, Սեմյոնովկա՝ +12^{0}C), Լոռիում՝ +7...+11^{0}C, Արմավիրում՝ +15...+18^{0}C, Արարատում՝ +15…+17^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +6...+10^{0}C, նախալեռներում՝ +14...+18^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են օգոստոսի 22-ին, 30-ին. լեռնային շրջաններում՝ +2...+7^{0}C, որոշ շրջաններում՝ +10…+12^{0}C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ +14....+18^{0}C:



Հանրապետությունում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:

Մշակաբույսերի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի խոնավության պաշարներն անցյալ տասնօրյակի համեմատ գրեթե նույնն էին և շարունակվել են մնալ անբավարար:

Լեռնային շրջաններում 20սմ խորության վրա կազմել են 10-20%, նախալեռնային շրջաններում՝ 15-25%, հովտային շրջաններում՝ 15-25%: Հողի 40սմ խորության շերտում լեռնային շրջաններում կազմել են 15-30%, նախալեռնային շրջաններում՝ 15-35%, հովտային շրջաններում՝ 18-35%:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



















Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի հասունացումը և բերքահավաքը: Դաշտերում և այգիներում կատարվել է հերթական վեգետացիոն ոռոգում:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել մշակաբույսերի հասունացման, շաքարանյութերի կուտակման և բերքահավաքի համար:

Հանրապետությունում կատարվել է պտղատուների, խաղողի, բանջարանոցային և բանջարաբոստանային մշակաբույսերի, եգիպտացորենի, կարտոֆիլի, կաղամբի մասսայական բերքահավաք:

Լեռնային շրջաններում շարունակվել է աշնանացան ցորենի նախացանքային աշխատանքները: